

գամ ոչ սննչան, և քանի մի պարա-
գայից մէջ չափէն աւելի »:

Հաւանական է, թէ նոյն ինքն յօ-
դուածագիրն ալ այս նախադիշատա-
կեալ գրադէտ ամուրեաց դասակար-

գէն ըլլայ, և ինչպէս միշտ մարդս հա-
կեալ է իր անձէն չափել զուրիշները,
ուստի անձնական պատճառներէ շար-
ժեալ կ'ըսուի թէ ամենայն ինչ ըստ
կարի աժան է:

ՕՐԷՆՔ ԶԻՆՈՒՈՐԱԳՐՈՒԹԵԱՆ Ի ՌՈՒՄԻԱ

Զօրութեամբ օրինացն $\frac{1}{13}$ յունուարի
1874, որ գործադրական է յամենայն մա-
սունն ինքնակալութեան և թագաւորու-
թեանն Բոլոնիոյ, 'ի բաց առեալ քանի մը
տառնձնակ գաւառներ Ախլերիոյ, Թուր-
քաստանի և Անգրակովասու, ինչպէս Խա-
զախներն ու օտար ժողովուրդները, ամեն
ուստիացի որ լիապէս կը վայելէ իր քաղա-
քական իրաւունքը, պարտական է զինուո-
րելու, սկսեալ 1 յունուարի այն տարւոյն,
որուն մէջ կը լրացունէ 21 տարեկան հա-
սակը: Հետեւեալ պատճառները ազատու-
թիւն կու տան զինուորական ծառայութե-
նէ. մարմնական տկարութիւնք, ընտանե-
թեան յարմար անձանց թիւը բաւական ըլ-
լայ. ապա թէ ոչ զինուորագրութիւնը տե-
ղի կ'ունենայ ըստ երեք ստորոգութեանց.
քրիստոնեայ եկեղեցական վիճակը բոլոր-
ովին ուզատ կ'ընէ զինուորական ծառա-
յութենէ. բժիշկք, գեղադարձք, անասնա-
բոյժք, դաստիարակք ուղիտ կ'ըլլան զի-
նուորական ծառայութենէ խաղաղութեան
ժամանակ, միայն դաստիարակք երբ վի-
ճակին ելլէ՝ 15 տարի պաշտօնի բանակին
(réserve) կը վերաբերին. քանի մը անցողա-
կան մարմնական տկարութիւնք, ընտա-
նեաց քանի մը պարագայք, ինչպէս նաև
աստիճան մ'ուսուցանականութեան կրնան

պատճառ ըլլալ ետ ձգելու զինուորագրու-
թիւնը: Ծառայութեան բոլորական տեղ-
դութիւնն Էւրոպայի Ռուսիա՝ կը բովան-
դակէ 15 տարի, 6 տարի ներգործօն բա-
նակին մէջ, 9 տարի պաշտօնի բանակին
մէջ. իսկ Ասիայի Ռուսիա՝ զինուորական
ծառայութիւնը կը բովանդակէ 10 տարի,
7 տարի ներգործօն բանակին մէջ, 3 տա-
րի պաշտօնի բանակին մէջ, — Աստիճան
մը ուսուցանականութեան կը համառօտէ
զինուորական ծառայութեան բոլորական
տեղութիւնը, երբ զինուորագրեալը կա-
մաւոր զինուոր կ'երթայ և վիճակ չի հա-
ներ, ու կը վերածուի կամ 9 $\frac{1}{4}$ տարի,
կամ 9 $\frac{1}{2}$ տարի, կամ 11 տարի, որոնց 3
ամիսը, 6 ամիսը կամ 2 տարին պէտք է
անցունել ներգործօն բանակին մէջ: Երբ
զինուորագրեալը կամաւոր չերթար ու վի-
ճակ կը հանէ, իր ներգործօն ծառայու-
թիւնը կը վերածուի ու կ'ըլլայ միայն կամ
6 ամիս, կամ մէկ ու կէս տարի, կամ 3
տարի և կամ 4 տարի (6 տարի յԱսիա)
ըլլալով զինուորական պարտաւորիչ ծա-
ռայութեան տեղութիւնը 15 տարի (10
տարի յԱսիա). — Այն պատահիք որոնք
կը զինուորագրին իրր Ախլերի (այսինքն
կամաւորք՝ ապառ'ի ծառայութենէ) կը հա-
մարուին նկատմամբ իրենց ծառայութեան
ժամանակին իրր մասն կազմող բանակի: